



**MILLENNIUM CHALLENGE  
ACCOUNT - ARMENIA**  
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

Մամյո հաղորդագրություն

11 նոյեմբերի, 2009

## **ԱՄՆ կառավարությունը լրացուցիչ 15 միլիոն դոլար է տրամադրել մայր ջրանցքների վերականգմանը**

Երևան, Հայաստան- 2009թ. նոյեմբերի 11-ին «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան » ՊՈԱԿ-ը պայմանագիր է ստորագրել Արփա-Սևան ԲԲԸ /Հայաստան/ և ՍԱԴԵ /Ֆրանսիա/ ընկերություններից բաղկացած կոնսորցիումի հետ, համաձայն որի կիրականացվի Արզնի-Շամիրամ, Ստորին Հրազդան, Արտաշատ և Շիրակ մայր ջրանցքների 35,4 երկարությամբ հատվածների և մոտ 70 հիդրոտեխնիկական կառույցների վերականգնումը:

Մայր ջրանցքների առաջին փաթեթի աշխատանքների հետ միասին ընդհանուր առմամբ կվերականգնվի 39.6 կմ ջրանցքի հատվածների վերականգնում, իսկ մայր ջրանցքներում ընդհանուր ներդրման չափը կհասնի ավելի քան 20 միլիոն դոլարի: Արարատ, Արագածոտն, Արմավիր, Կոտայք և Շիրակ մարզերի 200 համայնքներում ավելի քան 110,000 շահառուներ կունենան ավելի հուսալի ոռոգման ջուր:

Պայմանագրի արժեքը 14,618,601 դոլար է, իսկ տևողությունը՝ 18 ամիս: Վերականգնման աշխատանքների շրջանակներում կատարվելու է ջրանցքների մաքրում, ջրթողների և դրանց փականների վերականգնում, մոնոլիտային բետոնի և երկաթբետոնի կիրառում, ինչպես նաև այնպիսի առաջատար տեխնոլոգիաների կիրառում, ինչպիսին է տորկետը:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ոռոգման ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կիրականացվեն նաև 17 պոմպակայանների վերանորոգման, չորս ինքնահոս համակարգերի կառուցման, մոտ 70 համայնքներում ներտնտեսային ցանցերի բարելավման և Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի բարելավման աշխատանքներ: Մինչև ՀՄՀ-Հայաստան ծրագրի ավարտը 2011թ. ծրագրում կկատարվի 180,000, 000 ԱՄՆ դոլարի ներդրում:

**Այս իրադարձության և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել**

[www.mca.am](http://www.mca.am)

*Millennium Challenge Account–Armenia (MCA–Armenia), a State Non-Commercial Organization established by the Government of Armenia, is responsible for overseeing the transparent implementation of the Compact signed between the Millennium Challenge Corporation and the Government of Armenia.*